ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Ուսուցչի դերը մասնագիտական կողմնորոշման գործընթացում**

Կատարող՝ **Հասմիկ Սիմոնյան**

Առարկա՝ **Քիմիա**

Ուսումնական հաստատություն՝
Հրազդանի Լ. Խեչոյանի անվան թիվ 10 ա/դ

Հրազդան-2022

Բովանդակություն

1. Ներածություն.....3
2. «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի նպատակն ու խնդիրներ...5
3. Դասընթացի ներդնման և ուսումնական նյութերի մշակման սկզբունքները.7
4. Ինչպե՞ս կատարել համապատասխան ընտրություն.....9
5. Ուժերի գնահատում.....12
6. Ուսուցչի դերը կարիերայի ուղղորդման մեջ.....15
7. Ուսուցչի մասնագիտության առավելությունները.....17
8. Նշանավոր ուսուցիչներ.....20
9. Եզրակացություն.....21
10. Օգտագործված գրականության ցանկ.....22

Ներածություն

Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների առաջնային խնդիրներից մեկը մասնագիտության գիտակցված ընտրությունն է: Ներկայումս, ազատ տնտեսական հարաբերություններով պայմանավորված՝ այն դառնում է առավել արդիական և հրատապ: Նորագույն տեխնոլոգիաների, կրթության և աշխատանքի նոր շուկաների զարգացման պայմաններում շատ մասնագիտությունների և զբաղմունքների ներկայացվում են նոր պահանջներ, ծնվում են նոր մասնագիտություններ, որոնց մասին սովորողներն ու նրանց ծնողներն անգամ պատկերացում չունեն: Բացի անբավարար տեղեկատվությունից, կարևոր է նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների նախասիրությունների և անձնային որակների բացահայտումն ու զարգացումը, և նախընտրած մասնագիտության համադրումը աշխատաշուկայի ներկա և կանխատեսվող պահանջարկի հետ: Մասնագիտության ընտրությունից հետո հաջորդ կարևոր խնդիրը մասնագիտական ուսումնական հաստատության ընտրությունն է:

Հետազոտական աշխատանքնի հիմնական նպատակն է `

- ցույց տալ այն ուղիները, որոնցող ուսուցիչը աշակերտին ճիշտ կերպով կուղղորդի մասնագիտություն ընտրելու հարցում:
- կարևորի ուսուցչի դերը անձի ձևավորման ու զարգացման գործում:
- կկարևորի ուսուցչի մասնագիտությունը :

Հոտազոտական աշխատանքի արդիականությունը՝

- թեման բավական արդիական է , քանի որ ճիշտ քաղաքացի, մասնագետ ձևավորելու համար նախ և առաջ ճիշտ կողնորոշումը, քանի ուղղակի ուղղորդումը: Աշակերտն ինքը պետք է որոշի ինչ ուղի ընտրել, ինչ մասնագիտություն ընտրել, որն էլ գուցե իրեն կուղեկցի մինչև կյանքի ավաարտ:

Այս ուղղություններով տեղեկատվախորհրդատվական աշխատանքները սովորողներին կօգնեն մասնագիտական գիտակցված ընտրության հարցում՝ դրանով

իսկ ստեղծելով կարիերայի համար կայուն հիմքեր, նպաստելով աշխատանքային գործունեության մեջ ներդաշնակության ապահովմանն ու մրցունակ, պահանջված մասնագետ դառնալուն: Անձի մասնագիտական ուղղվածության ու կարողությունների բացահայտման աշխատանքները պետք է սկսել նախադպրոցական տարիքից՝ կողմնորոշման գործընթացի սուբյեկտ դիտարկելով ոչ թե միայն խորհրդատու մասնագետին, այլ ներառելով բոլոր ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող անձանց՝ առարկայական ուսուցիչներ, մանկավարժ-մասնագետներ, հոգեբաններ, ծնողներ, գործատուներ:

Մասնագիտական կողմնորոշման հիմնահարցերը հասարակական հետաքրքրության են արժանացել միայն 19-րդ դարի վերջերից: Այն հանգամանքը, որ իր ընդունակություններին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրած անհատը ավելի մեծ օգուտ է բերում իրեն և հասարակությանը, հիմք է դարձել մասնագիտական կողմնորոշման, մասնագիտության ընտրության գործընթացների գիտական հիմնավորման, մեթոդաբանության մշակման անհրաժեշտության համար: Մի կողմից դա աշխատաշուկայի, զբաղմունքների, մասնագիտությունների, մասնագիտական կրթության համակարգի ուսումնասիրության հարց է, մյուս կողմից՝ սովորողների անհատականության, նրանց հետաքրքրությունների, ցանկությունների, հակումների և ընդունակությունների ուսումնասիրման մեթոդների, դրանցով ստացված տվյալների հիման վրա նպատակահարմար ու մասնագիտական խորհրդատվության համակարգի ստեղծման ու կիրառման:

Անցյալ դարի 50-60-ական թվականներից Արևմուտքի մի շարք երկրներում ներդրվեց սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությանը նախապատրաստելու առավել առաջավոր համակարգ, որում ներգրավված էին հանրակրթական ուսումնական հաստատությունները, մասնագիտական ուսումնական հաստատությունները և մասնագիտական կողմնորոշման կենտրոնները: Հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժները մասնագիտացված կենտրոնների մասնագետների ղեկավարությամբ իրականացնում էին սովորողների մասնագիտական կողմնորոշում, կազմում յուրաքանչյուրի դիտարկումների վրա հիմնված բնութագրեր և ուղղորդում համապատասխան խորհրդատվությամբ:

Մասնագիտական կողմնորոշումը գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկակենսաբանական գործընթաց

է, որը կոչված է նպաստելու երիտասարդների կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը և կարիերայի պլանավորմանը՝ բացահայտելով և զարգացնելով վերջիններիս հետաքրքրություններն ու հակումները, ինչպես նաև ձևավորել աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք շուկայական հարաբերությունների պայմաններում: Այն ենթադրում է մանկավարժության, հոգեբանության, սոցիալական աշխատանքի շրջանակներից դուրս, առավել ընդգրկուն համալիր աշխատանքներ՝ ուղղված մասնագիտության ընտրությանը և կարիերայի պլանավորմանը:

Հոգեբանամանկավարժական կողմը ենթադրում է սովորողների տարիքային, անձնային առանձնահատկությունների, ընդունակությունների, նախասիրությունների, հետաքրքրությունների, հակումների բացահայտում և մասնագիտական ինքնորոշում:

Սոցիալ-տնտեսական կողմը սովորողների մասնագիտության ընտրության ուղղորդման գործընթացն է աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան:

Բժշկաֆիզիոլոգիական կողմը լուծում է այնպիսի հիմնախնդիր, ինչպիսին է սովորողների ֆիզիկական առողջության և նախընտրած մասնագիտության համատեղելիությունը:

Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հանրակրթական ուսումնական հաստատություններում պետք է իրականացվեն ուսումնադաստիարակչական գործընթացում, նաև արտադասարանական աշխատանքների ժամանակ:

«Մասնագիտական կողմնորոշման » դասընթացի նպատակն ու խնդիրները

«Մասնագիտական կողմնորոշում» կրթական ծրագրի հիմնական նպատակը սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությանն ու ինքնորոշմանը նպաստելն է՝ անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում մրցունակ ապագա աշխատուժի պահանջարկին առավելապես համապատասխանող մասնագիտական գործունեության ազատ և գիտակից ընտրության հնարավորության ստեղծմամբ:

Խնդիրները.

«Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի ծրագրի խնդիրներն են.

1. հոգեբանամանկավարժական դիագնոստիկ մեթոդներով բացահայտել սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ առանձին հատկանիշները, խառնվածքը, ընդունակությունները, նախասիրությունները, հակումները, հետաքրքրությունները, պահանջմունքները, դրդապատճառները,

2. տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն սովորողի նախասիրություններին, հակումներին, անձնային որակներին և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան,

3. ձևավորել աշխատանքի և մասնագիտությունների վերաբերյալ դրական վերաբերմունք,

4. նպաստել կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության միջոցով ինքնազբաղվածության ապահովմանն ուղղված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը,

5. կազմակերպել և անցկացնել ոչ ֆորմալ խմբային դասընթացներ՝ ուղղված կարիերայի պլանավորման հմտությունների զարգացմանը,

6. ձևավորել համագործակցության ճկուն համակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (արհեստագործական, միջին և բարձրագույն մասնագիտական), ինչպես նաև գործատուների, միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների և շահագրգիռ այլ կառույցների միջև:

Դասընթացի բովանդակությունը հիմնված է հետևյալ ընդհանրական սկզբունքների վրա.

1. Նյութը կառուցված է սովորողի անձի անհատական հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների, հետաքրքրությունների և հնարավորությունների առաջնահերթության և մարդասիրության սկզբունքի հիման վրա:

2. Դասընթացի թեմատիկ բովանդակությունը կառուցված է համապատասխան դասարանների սովորողների համար մատչելիության սկզբունքի ապահովմամբ և ուղղված է նրանց անձնային աճի ապահովմանը:

3. Դասընթացի բովանդակությունը կառուցված է ուսման, կյանքի և աշխատանքի փոխադարձ կապի ապահովման տրամաբանությամբ:

4. Դասընթացի բովանդակությունը հիմնված է գիտականության, տեխնոլոգիայի և աշխատաշուկայի պահանջների վրա:

5. Թեմաները կառուցված են տրամաբանական հաջորդականությամբ և համակարգված են:

6. Բովանդակությունը կառուցված է հաջորդականության և շարունակականության սկզբունքով՝ պարզից բարդ սկզբունով՝ սովորողների տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ:

7. Հիմնված է սովորողի առանձնահատկությունների, իրական կյանքի օրինակների և աշխարհում և ՀՀ-ում արագ փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին նախապատրաստելու սկզբունքի վրա:

8. Նյութի բովանդակությունը կառուցվում է գիտելիքների և կարողությունների զարգացմանը զուգընթաց՝ որում ներառված է սովորողների վերաբերմունքը, արժեքային համակարգը, զարգանան սոցիալական հմտություններն ու ստեղծագործական ունակությունները:

Դասընթացի ներդրման և ուսումնական նյութերի մշակման սկզբունքները

Դասընթացը կարող է վարել միայն վերապատրաստված և երաշխավորված մասնագետը (նախապատվությունը տրվում է դպրոցի սոցիալական մանկավարժին, հոգեբանին և մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրենին), ով նախապես պետք է ընտրվի դպրոցի կողմից՝ հաշվի առնելով «Մասնագիտական

կողմնորոշում» դասընթացը դասավանդելու համար անհրաժեշտ մասնագիտական և անձնային որակները:

Հանրակրթության ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերի պահանջների և կրթության բովանդակության կառուցվածքի համաձայն՝ 12-ամյա հանրակրթական դպրոցում «Մասնագիտական կողմնորոշումը» դիտարկվում է որպես գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկաֆիզիոլոգիական գործընթաց, որը կոչված է նպաստելու սովորողի անձի կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը և կարիերայի պլանավորմանը՝ բացահայտելով և զարգացնելով վերջիններիս անհատական հոգեբանական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու հակումները, ապահովելու նրանց անձնային աճը, ինչպես նաև ձևավորել աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք շուկայական հարաբերությունների պայմաններում:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մի շարք երկրներում հանրակրթական ուսումնական հաստատություններում հատկացված են մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման հարմարավետ սենյակներ (կողմնորոշման կամ տեղեկատվական սենյակ)՝ համալրված անհրաժեշտ բոլոր ռեսուրսներով, սարքավորումներով: Կողմնորոշման սենյակի այցելուների մուտքն ապահովելու նպատակով ընտրվում է պատասխանատու անձ, ով անհրաժեշտության դեպքում նաև նրանց ուղղորդում է: Գրասենյակի աշխատանքները համակարգվում են շաբաթական նախատեսված աշխատանքային գրաֆիկով: Յուրաքանչյուր մասնագետ համապատասխան մեթոդաբանությամբ և նախատեսված ժամկետներում իրականացնում է իր գործառույթները, որի մասին նաև գրառումներ է կատարում՝ հաջորդ մասնագետներին փոխանցելու նպատակով: Գրասենյակը տալիս է նաև ինքնասպասարկման հնարավորություն և իր բոլոր հարմարություններով նախատեսված է ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների և մասնագետների համար:

Ինչպե՞ս համապատասխան ընտրություն կատարել

Մասնագիտական ընտրության շեմին կանգնած մարդիկ տարբերվում են շրջապատող աշխարհի պահանջներին համապատասխան իրենց հնարավորությունները գնահատելու և իրենց ճանաչելու ձգտմամբ:

Մասնագիտական ինքնագիտակցության զարգացմանհարցում առավել զգայունակ են հատկապես ավագ դպրոցականները:Սակայն մասնագիտության ընտրությունը մասնագիտական կայացման բարդ, երկարատև, շարժական ու հակասական գործընթացի միայն սկիզբն է: Այդ գործընթացում Տ. Վ. Կուդրյավցևն առանձնացնում է չորս շրջան.

1. Մասնագիտական մտադրությունների ծագում և ձևավորում: Դրա հաջող իրականացման հոգեբանական չափորոշիչը՝ աշխատաշուկայի, հասարակական պահանջմունքների և անձի մասնագիտական պահանջմունքների միջև համապատասխանություն գտնելն է:

2. Մասնագիտական կրթություն և դաստիարակություն: Սրա հաջողության հոգեբանական չափորոշիչը անձի մասնագիտական ինքնորոշումն է, այսինքն՝ իր հանդեպ վերաբերմունքի ձևավորումը՝որպես ընտրված մասնագիտության ու մասնագիտական ուղղվածության սուբյեկտի:

3. Ակտիվ ներխուժում մասնագիտական միջավայր և մասնագիտական պարտականությունների կատարում: Սրա իրականացման հաջողության հոգեբանական չափորոշիչը մասնագիտության ակտիվ տիրապետումն է իրական աշխատանքային գործընթացի ուարտադրական հարաբերությունների պայմաններում և իրեն գտնելը աշխատանքային կոլեկտիվների համակարգում:

4. Անձի հնարավորությունների և մասնագիտական ձգտումների իրականացում ինքնուրույն աշխատանքում (լրիվ կամ մասնակի):

Մասնագիտության ընտրության ազդող գործոններն են՝

- Մասնագիտության մասին գիտելիքներն ու դրա պահանջարկը
- Հակումները (հետաքրքրություններ, ջանքեր)
- Ընդունակություններ, առողջություն (ներքին հնարավորություններն ու սահմանափակումները)
- Պահաջների և ինքնագնահատման մակարդակը
- Ծնողների, ընտանիքի կարծիքը
- Հասակակիցների կարծիքը
- Ուսուցիչների, մասնագետների դիրքորոշումները
- Անհատական մասնագիտական պլան

Ի՞նչ է նշանակում մասնագիտության հիմնավորված ընտրություն և սխալ ընտրություն: Մասնագիտության ճիշտ և հիմնավորված ընտրությունը ենթադրում է ծայրահեղ դեպքում չորս գործոնների հաշվառում.

- անհատական առանձնահատկությունների,
- աշխատաշուկայի իրադրության (կոնյունկտուրա), այսինքն՝ ինչ մասնագիտություններ են պահանջված ներկա պահին,
- ընտրվող մասնագիտության և ուսումնական հաստատությանմասին տեղեկացվածության,
- ենթադրվող ընտրության վերաբերյալ շրջապատողների (ծնողների, ուսուցիչների, ընկերների և այլոց) կարծիքի:

Իր հերթին, մասնագիտության սխալ ընտրությունը հաճախակի կապված է հետևյալ կողմնորոշումների հետ.

- որևէ բանով (օրինակ, նկարչությամբ) տարվածությունն ընտրության պահին,
- երբեմն խմբերով մեկ բուհ ընդունվող հասակակիցների ընկերակցությունը,
- ծնողների և ընկերների կտրական կարծիքը, ընտրված մասնագիտության անփոփոխությունը և դրան նվիրվածությունը,
- մասնագիտությունը մարմնավորող մարդը, բայց ոչ հենց մասնագիտությունը: Առաջադիմող մասնագետը սովորաբար բարձրանալ սկսում է ցածր աստիճաններից,

- ենթադրվող (և ոչ իրական) անձնային ու մասնագիտական կարևոր որակները, այսինքն՝ սեփական ֆիզիկական ու հոգեկան առանձնահատկությունների և թերությունների չիմացությունը կամ թերագնահատումը:

Իսկ ինչպե՞ս համապատասխան ընտրություն կատարել

Այսպիսով, գտնվելով ապագա մասնագիտության փնտրտուքների մեջ, անպայման պետք է հաշվի առնել վերոնշյալ բոլոր գործոնները:

Նախ փորձել պատասխանել հետևյալ հարցերին

1. "Ո՞վ եմ ես. Ինչպիսի՞ն եմ ես"- յուրաքանչյուր հարցի համար գրել 10 պատասխան (ինքնաբացահայտում, սեփական ռեսուրսների վերհանում)
2. Լրացնել աղյուսակը հետևյալ բանաձևով.

Ուզում եմ Իմ հետաքրքրությունները, նախասիրությունները, հակումները

Կարող եմ	Իմ ընդունակություններն ու հնարավորությունները
Պետք է	Մասնագիտության պահանջները

Այս ամենը կօգնի վերանայել սեփական հնարավորությունները, հետաքրքրությունները ու համեմատական վերլուծություն կատարել մասնագիտական պահանջների ու սեփական անձի միջև. Արդյո՞ք համապատասխանում են մասնագիտության պահանջները անձի հետաքրքրություններին ու ընդունակություններին:

Մասնագիտական կողմնորոշման համար արդյունավետ են նաև հոգեբանական թեստերը, որոնք ուղղված են լինում մասնագիտական կողմնորոշմանը և օգնում են գտնել անձնային առանձնահատկություններին համապատասխան մասնագիտությունները:

Ուժերի գնահատում

Կրթական համակարգում ապագա մասնագետների կայացման համար կարևոր դեր են խաղում մասնագիտության մեջ ինքնորոշումը, մասնագետների և աշխատաշուկայի պահանջարկի համապատասխանությունը, ինչին հնարավոր է հասնել հոգեբանամանկավարժական աջակցմամբ և ուղղորդմամբ: Եթե մինչ այժմ ուսումնառության մեջ մեզ հասած ժառանգությունը իմաստավորվել է մասնագիտական կողմնորոշման ճանապարհով, այն եղել է արդարացված, քանզի ապագա մասնագետները աշխատանքի են ուղղորդվել ըստ ստացված որակավորման: Փոփոխվող հասարակության պայմաններում այն չունի արդյունավետություն, քանի որ ապագա մասնագետները (դեռահասներ, պատանիներ, երիտասարդներ) կրթությունը ստանալուց հետո աշխատանքի ընտրությունը կատարում են ինքնուրույն կողմնորոշվելով, ելնելով պահանջարկից: Այսինքն, այսօր առավել կարևոր է ապագա մասնագիտության համար ինքնորոշումը սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցման ճանապարհով, ոչ թե մասնագիտական կողմնորոշում՝ դրանց գնահատման միջոցով: Այս առումով կարևորում ենք հոգեբանական աջակցումն

ու խթանումը ավելի վաղ՝ դեռահասության տարիքում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տեղեկատվության լայնածավալ կիրառմամբ և դեռահասների շրջանում հոգեբանական ինքնաճանաչման, ինքնագիտակցման ձևավորման և զարգացման ճանապարհով: Սովորողի մասնագիտական ինքնորոշմանը կարելի է մոտենալ որոշակի հիերարխիայով. մանկական տարիքի խաղային գործունեության առանձնահատկություններից՝ թե ուր են ուղղված եղել հետաքրքրությունները (ինչպիսի դերեր, հերոսներ, կերպարներ և այլ), մինչև հասուն տարիքում՝ ընդունակություններով պայմանավորված՝ մասնագիտության ընտրություն և իրացում: Հիերարխիայի յուրաքանչյուր շերտ «պատասխանատու է» տարիքային այս կամ այն փուլի համար: Այսպես. դեռահասի պատկերացումներն ու երազանքները որոշակի համակրանք, կամ նույնիսկ հրապուրաքն են ձևավորում կոնկրետ մասնագիտության հանդեպ, իսկ արդեն պատանեկան տարիքում դրանք նախահիմք են դառնում արժեհամակարգի համար: Ապագա մասնագետը կա- 6 յացնում է իր որոշումը, ընտրում է մասնագիտությունն ու ծավալում սկզբում ուսումնական, այնուհետև մասնագիտական գործունեությունը: Հանրակրթական հաստատություններն այսօր նոր պահանջներ են առաջացնում ապագա երիտասարդների համար: Դրանցից ամենակարևորներից է մասնագիտական կոմպետենտության, որպես իրազեկվածության, ապահովումը: Ավագ դպրոցականների և երիտասարդների մոտ մասնագիտական կոմպետենտությունը կարող է նպաստել ապագա մասնագիտության ընտրության հնարավորությունների ընդլայնմանը, արդյունավետ ինքնորոշմանը: Մասնագիտական ինքնորոշումը ապահովում է որոշակի պատրաստվածություն ապագա մասնագիտության ընտրության համար: Ելնելով այն հանգամանքից, որ կրթական հաստատությունը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ, անհրաժեշտ է ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների, կոմպետենցիաների ձևավորման գործընթացը ևս: Կոմպետենցիաները, որպես անձի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, գործունեության ձևերի փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում, տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեության իրականացմանը: Համապատասխան կոմպետենցիաներին տիրապետելը և գործունեության հանդեպ ձևավորված հստակ պատկերացումներն ու վերաբերմունքը ապահովում են մասնագիտական կոմպետենտությունը երիտասարդ տարիքում: Մեր կողմից

իրականացվող ծրագրի շրջանակներում դուրս են բերվել մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները: Առանձնակի կարևորվել են մասնագիտական կոմպետենտության և ինքնիրացման էական նշանակությունները, համադրություններն ու տարբերությունները: Կոմպետենտության տեսանկյունից կարևորվել է

- համապատասխան գիտելիքի տիրապետումը,
- մասնագիտական նույնականացումը,
- նպատակի և դրան հասնելու միջոցների հստակությունը,
- պարտականության գիտակցումը,
- գործին ուղղված պատասխանատվության զգացումը,
- մասնագիտական գործունեության մեջ հնարավոր խնդրի կանխատեսումը,
- անձնային և մասնագիտական որակների փոխլրացումն ու համադրումը,
- աշխատանքի արդյունքի կարևորումն ու պահանջարկը…

Կոմպետենտության համար կարևորվում է նպատակների հստակությունն ու հաստատությունը, իսկ մանսագիտական ինքնիրացման համար՝ ճկունությունն ու նպատակների բազմազանությունը: Երբ դիտարկում ենք կոմպետենտությունն ու ինքնիրացումը ինքնուրույնության տեսանկյունից, ապա նույնպես հանգում ենք հակադրության. Կոմպետենտությունը չի պարտադրում ինքնուրույնություն, նույնիսկ սահմանափակում է այն, իսկ ինքնիրացման համար ինքնուրույնության ցուցանիշները կարող են միայն համալրվել ու նորովի զարգանալ: Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն…

Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար: Ավելի ուշ, դպրոցական տարիքում առավել կարևորվում է գիտելիքը, իմացությունը, ինչը թելադրվում է մեծի կողմից, և այս առումով ինքնուրույնության խթանումը զուգահեռ դժվար է իրականացնել: Սեփական անձի

հետաքրքրությունների և ապագա մասնագիտության սկզբնական ինքնորոշման քայլերը կարող են իրականանալ վաղ դեռահասության տարիքում:

Եթե տեղեկացվածությունը, մասնագիտությունների մասին պատկերացումները բավարար լինեն ինքնորոշման համար, ապա ուսումնական հաստատություններում սովորողները կարող են ինքնուրույն կողմնորոշվել սպասվող հոսքային ընտրության համար, այսինքն կայացնել որոշում՝ որպես ապագա մասնագետ: Մեր կողմից տարիների ընթացքում մշակվել են մասնագիտական ինքնորոշումը խթանող մի քանի գնահատման գործիքներ, որոնք փորձարկվել և տեղայնացվել են հանրակրթական և բուհական հաստատությունների սովորողների շրջանում: Ներկայացվող մեթոդական ուղեցույցն ընդգրկում է նաև տեղայնացված հայտնի հոգեբանական թեստեր, գործնական վարժություններ և տեխնիկաներ, որոնք ևս անցել են փոձարկման ճանապարհ:

Ուսուցչի դերը կարիերայի ուղղղորդման մեջ

Ամառային արձակուրդները հիանալի ժամանակ են դպրոցականների համար՝ մտածելու իրենց ապագա մասնագիտության մասին: Այսօր բազմաթիվ նախագծեր կան, որոնք տղաներին մատչելի կերպով պատմում են, թե ինչ մասնագետներ են պահանջված լինելու աշխատաշուկայում: Եկեք խոսենք այն մասին, թե ինչպես ընտրել սովորողի զարգացման հետագիծը և հետաքրքրել նրան որոշակի մասնագիտությամբ:

Ուսուցչի դերը կարիերայի ուղղորդման մեջ միշտ մնում է առանցքային: Դա ուսուցիչն է, ով կարողանում է ուղղորդել աշակերտին, օգնել նրան կողմնորոշվել տեղեկատվական հոսքի մեջ և ընդգծել անձամբ իր համար ամենաօգտակարն ու արդիականը:

Կարող են մասնակցել 6-11-րդ դասարանների աշակերտները: Աշակերտը թեստավորվում է երեք փուլով. Առաջին քայլը զարգացման հարցաշարն է, որը որոշում է աշակերտի՝ մասնագիտություն ընտրելու պատրաստակամությունը (դա պետք է կազմակերպվի դպրոցում): Երկրորդ քայլը կարևոր կարողությունների և փափուկ հմտությունների ախտորոշումն է: Երրորդ քայլը որոշում է, թե որքանով է աշակերտը գիտի տարբեր հեռանկարային ոլորտների մասին, այստեղ ստուգվում են «ծանր» հմտությունները: Վերջին երկու թեստերը սովորողն ինքնուրույն է հանձնում:

Թեստավորումից հետո մասնակիցը կարող է անցնել մասնագիտական թեստեր՝ վարպետության դասեր, հեքըթոններ, մրցույթներ և գործնական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումներ, որոնք թույլ են տալիս խորասուզվել ցանկացած մասնագիտական ոլորտում: Պետք է նախապես գրանցվել մասնագիտական թեստերի համար. ցանկում կան բազմաթիվ իրավասություններ՝ բլոկչեյնից մինչև ֆլորիստիկա: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր մարզում նախատեսվում է անցկացնել լայնածավալ փառատոներ, որտեղ դպրոցականները կկարողանան ծանոթանալ մասնագիտական տարբեր ոլորտների՝ դեղագործություն, էներգետիկա, հրթիռային գիտություն, արհեստական բանականության տեխնոլոգիաներ և այլն: Մասնագիտական թեստերից հետո սովորողը կունենա իր անձնական մենթորը՝ դպրոցի ուսուցիչը, մասնագիտացված բուհի ուսանողը, ով հեռակա կարգով կօգնի ապագա մասնագիտություն սովորել:

Պատուհան դեպի մասնագիտություն

Կարևոր է, որ ուսուցիչը փորձի օգնել երեխաներին մասնագիտական ինքնորոշման հարցում: Օրինակ՝ նա պահում էր կարիերայի ուղղորդման օրացույց, որտեղ նշում էր այս ոլորտի բոլոր կարևոր իրադարձությունները՝ համալսարանի բաց օրեր, պրակտիկա և պրակտիկա դպրոցականների համար:

Բուհերն իրենց կայքերում նախապես տեղեկացնում են բաց օրերի մասին, հաճախ հայտարարություններ են լինում ամառային դպրոցների և պրակտիկայի մասնակիցների հավաքագրման մասին: : Սա ուսումնական ինտենսիվ է 9-10-րդ դասարանների աշակերտների համար, ովքեր կկարողանան իրենց զգալ ապագայի

մասնագետներ, ծանոթանալ տեխնիկական նոր զարգացումներին: Ծրագիրը ներառում է վարպետության դասեր, դասախոսություններ, գործնական պարապմունքներ, էքսկուրսիաներ և թրեյնինգներ, ինչպես նաև գիտաժողով, որտեղ լավագույն թիմերը կներկայացնեն իրենց նախագծերը: Արձակուրդների ընթացքում հանրապետության բուհերում կանցկացվեն ամառային դպրոցներ և դպրոցականների կարիերայի ուղղորդման փառատոներ:

Էքսկուրսիա

Մինչ ուսումն ավարտելը սովորողները կարող են իրենց փորձել մի քանի մասնագիտություններում: Սա կօգնի նրանց ճիշտ ընտրություն կատարել: Ի՞նչ դեր կարող է ունենալ ուսուցիչը այս դեպքում: Օրինակ՝ կազմակերպեք էքսկուրսիա դեպի արդյունաբերական ձեռնարկություն կամ ստեղծագործական ստուդիա, որտեղ սովորողները կարող են տեսնել, թե ինչպես են աշխատում մասնագետները:

Սովորողների ներգրավվածությունը մեծացնելու համար կարող եք նրանց համար առաջադրանք պատրաստել. ինքնուրույն պարզել ընկերության աշխատակիցներից, թե ինչ պաշտոններ կան ձեռնարկությունում, և այս մասին տեսանյութ կամ ներկայացում պատրաստեք էքսկուրսիայի դաշտում:

Պրակտիկա

Մասնագիտության մեջ ընկղմվելու մեկ այլ ձև պրակտիկա է: Սա իրական խնդիրների վրա աշխատելու հնարավորություն է: Պրակտիկայի ավարտից հետո տղաները կկարողանան օգտակար շփումներ հաստատել և ռեզյումեում տող ստանալ:Այս ձևաչափն ավելի հարմար է ավագ դպրոցի աշակերտների համար 14 տարեկանից (օրենքով), ավելի երիտասարդները կարող են գնալ կարիերայի ուղղորդման ճամբար:

Վարպետության դաս

Փորձագետը տղաներին կծանոթացնի մասնագիտությանը: Նա կկիսվի աշխատանքային խնդիրները լուծելու հնարքներով և կպատմի, թե ուսանողներին ինչ լրացուցիչ հմտություններ պետք կգան: Վարպետության դասի ձևաչափով ավելի հեշտ կլինի կենտրոնանալ հենց մասնագիտության վրա, այլ ոչ թե ընկերության վրա որպես ամբողջություն:

Ուսուցչի մասնագիտության առավելությունները

- **Նշանակալից աշխատանք .** Երիտասարդ մտքերը դաստիարակելն ինքնին պարգևատրելի աշխատանք է: Իսկ ուսանողի և դաստիարակի ինտելեկտուալ կապը բերում է բավարարվածության և ինքնարժեքի զգացում: Հատկապես հաճելի է տեսնել քո աշխատանքի պտուղները, երբ աշակերտը հասկանում է թեմայի կամ դասի բացատրությունը և չի սխալվում:
- **Մեծ ազդեցություն** . Ուսուցչի մասնագիտությունը չափազանց կարևոր է. Հաճախ իրենց սիրելի ուսուցչի շնորհիվ է, որ ապագա մեծահասակները ընտրում են իրենց մասնագիտությունը: Ուսուցիչը ոչ միայն սովորեցնում է նյութը, այլև դաստիարակում և ոգեշնչում է երեխային: Ուստի դասախոսական կազմից մեծապես կախված է՝ մարդ ինքնավստահ ու բաց է մեծանում, թե տխրահռչակ ու սեղմված:
- **Ուսանողների հարգանք և ճանաչում.** Ուսուցիչը ուսումնական տարվա ընթացքում 180 օր է անցկացնում աշակերտների հետ և դառնում է աշակերտների կյանքի գլխավոր հեղինակություններից մեկը: Շատ մեծահասակներ ջերմությամբ են հիշում իրենց սիրելի ուսուցիչներին և հաճախ կապ են պահպանում նրանց հետ տարիներ անց: Երեխաների աչքերում հարգանք, սեր և վստահություն տեսնելը քրտնաջան աշխատանքի ամենամեծ պարգևներից մեկն է:
- **Երկար արձակուրդ** . Ուսուցիչները վայելում են պաշտոնական արձակուրդը, որը տևում է 56 օր: Եվ ի տարբերություն այլ մասնագիտությունների, նրանք ստիպված չեն վիճել գործընկերների հետ, թե երբ է լինելու իրենց երկար սպասված արձակուրդը ծովում՝ ուսուցիչները միշտ արձակուրդ ունեն ամռանը: Դպրոցն ունի նաև եռամսյակների միջև արձակուրդներ, որոնց ընթացքում ուսուցիչները նույնիսկ աշխատանքի են գնում, բայց հնարավորություն ունեն ընդմիջելու ամենօրյա պարապմունքներից:
- **Վաստակելու հնարավորություն** . Գիտելիքը թանկ արժե: Ուստի մասնավոր դպրոցներում և ճեմարաններում ուսուցիչները բարձր աշխատավարձ ունեն: Ազատ ժամանակ ուսուցիչները կարող են լրացուցիչ գումար վաստակել կրկնուսուցման միջոցով և լրացուցիչ գումար վաստակել:
- **Multitasking** . Ամենօրյա աշխատանքի հագեցվածությունը մեծապես կախված է հենց ուսուցիչից, քանի որ երեխաների հետ աշխատելը ներառում է թատրոններ և թանգարաններ գնալ, բնության մեջ զբոսանքներ, դպրոցական միջոցառումներ և համերգներ կազմակերպել: Ուսուցիչները նաև ծնող-ուսուցիչ հանդիպումներ են անցկացնում, մասնակցում են կոնֆերանսների և սեմինարների՝ բարելավելու իրենց հմտությունները և կիսվելու փորձով: Օլիմպիադաների ժամանակ ուսուցիչներն իրենց աշակերտներին ուղեկցում են այլ քաղաքներ ճամփորդությունների ժամանակ, մինչդեռ մարզիչների կամ պարուսույցների համար մրցումների գործուղումները կյանքի անբաժանելի մասն են կազմում: Նման բազմազան գործունեությունն օգնում է ուսուցչին լիովին բացահայտել իրենց ստեղծագործական ներուժը և կազմակերպչական տաղանդները:

Ուսուցչի մասնագիտության թերությունները

- **Արտաժամյա աշխատանք** . Որպես կանոն, ծանր օրից հետո ուսուցիչը չի գնում հանգստանալու՝ փակելով գրասենյակի դուռը, այլ շարունակում է աշխատել տնից: Տնային աշխատանքների ստուգումը, ուսումնական պլան գրելը և վարչական այլ պարտականությունները, հատկապես դպրոցում, խլում են ազատ ժամանակի մեծ մասը: Այնուամենայնիվ, ուսուցիչների ամառային արձակուրդներին միայն կարելի է նախանձել:
- **Լրացուցիչ պարտականություններ** . Հազվադեպ չէ, որ ուսուցիչները դասավանդելուց բացի այլ ոչ պաշտոնական պարտականություններ են ստանձնում: Օրինակ՝ ուսուցիչը պետք է կարողանա մոտեցում գտնել «դժվար» երեխաների նկատմամբ՝ հանդես գալով որպես հոգեբան նման աշակերտների, իսկ երբեմն էլ նրանց ծնողների համար: Պետական հիմնարկներում (և ոչ միայն) ուսուցիչներին շատ թղթաբանություն են հանձնարարվում: Իսկ համաճարակի ժամանակ ուսուցիչները ստիպված էին հասկանալ հեռավար ուսուցման անընդհատ թարմացվող ծրագրերը:
- **Համապատասխանություն ստանդարտներին** : Չնայած մասնագիտության բավականին ստեղծագործական բնույթին, ուսուցիչները հաճախ ստիպված են լինում խստորեն գործել պատվերով: Ուսուցիչներից պահանջվում է մշտապես փոփոխվող չափանիշներին համապատասխանել, վերաշարադրել ուսումնական ծրագրերը, լրացնել հաշվետվություններ: Հաճախ նրանք ավելի շատ ժամանակ են ծախսում գործավարության վրա, քան ինքնուսուցման վրա: Ավելին, դպրոցները մրցում են տարբեր ցուցանիշներով, օրինակ՝ քննություն հանձնելու հարցում: Այս դեպքում ուսուցիչները պետք է պատրաստեն ուսանողներին՝ կենտրոնանալով ոչ թե բուն գիտելիքների, այլ քննությունների արդյունքների վրա:
- **Պարտադիր սերտիֆիկացում** . Հատկապես տարածված է արտասահմանում, որտեղ օտարերկրացիներն իրենց կարիերայի սկզբում պետք է քննություններ հանձնեն լիցենզիայի համար: Ռուսաստանում ուսուցիչները հավաստագրվում են 5 տարին մեկ: 2020 թվականից պատրաստվում են ներդնել սերտիֆիկացման նոր համակարգ: Այժմ այն ներառում է գրավոր աշխատանք, լրացուցիչ հաշվետվություններ դասերի տեսագրություններում, մանկավարժական գործ :
- **Համեստ աշխատավարձ** . Ուսուցիչը ամենաբարձր վարձատրվող մասնագիտությունը չէ. Օրինակ, Ռուսաստանում հանրակրթական դպրոցում նվազագույն աշխատավարձը 342 ԱՄՆ ԴՈԼԱՐ է : Եկամուտը բարձրացնելու համար ուսուցիչները կարող են լրացուցիչ մասնավոր պարապմունքներ տալ:
- **Զգացմունքային ծանրաբեռնվածություն** . Ուսուցիչ լինելը դժվար է. Անընդհատ պետք է գործ ունենալ քմահաճ և չարաճճի երեխաների հետ: Միևնույն ժամանակ, դուք պետք է նրբանկատ վարվեք, այլ ոչ թե արձակվեք: Եթե սկանդալային ծնողները հանդիպեն, կարողանաք ճիշտ ուղղորդել զրույցը և

կանխել կոնֆլիկտը: Սթրեսն ու բարոյական սթրեսը հաճախ ուղեկցում են ուսուցչին:

Նշանավոր ուսուցիչներ

Անտոն Սեմյոնովիչ Մակարենկոն աշխարհահռչակ մանկավարժ և ուսուցիչ է: Նա Խորհրդային Միության ամենաազդեցիկ կրթական տեսաբանն էր: 1905թ.-ից սկսած որպես ռուսաց լեզվի, նկարչության և գծագրության ուսուցիչ՝ Մակարենկոն հասել է դպրոցի տնօրենի: Այնուհետև 1920 թվականին նա ղեկավարել է անօթևանների

և անչափահաս հանցագործների գաղութը: Ուսուցիչը գրել է հոդվածներ, զեկուցումներ և գրքեր մանկավարժության և կրթության կազմակերպման թեմայով: Մակարենկոն ստեղծեց մանկավարժական համակարգ, որն ազդեց համաշխարհային և հայրենական մանկավարժության վրա:

Մարիա Մոնտեսորին ականավոր հումանիստ մանկավարժ է, գիտնական և բժիշկ Իտալիայից: Մոնտեսորին մշակել է անվճար կրթության յուրահատուկ և արդյունավետ մանկավարժական համակարգ, որը կրում է ստեղծողի անունը: Նա ձգտում էր բացառել ցանկացած ճնշում իր դաստիարակության մեջ և հավատում էր երեխայի էությանը: 1909 թվականից՝ Մոնտեսորիի կենդանության օրոք, բացվեցին Մոնտեսորիի մանկավարժության դասընթացներ, և հեղինակի մոտ բազմաթիվ ուսուցիչներ եկան տարբեր երկրներից: Մոնտեսորիի համակարգը դեռ օգտագործվում է աշխարհի բազմաթիվ պետական և մասնավոր դպրոցներում: Կանանց իրավունքների համար պայքարին մասնակցել է նաև ուսուցչուհին:

Խայմե Էսկալանտեն ծնվել է Բոլիվիայում 1930 թվականին, բայց փոքր տարիքում տեղափոխվել է Միացյալ Նահանգներ, որտեղ հայտնի է դարձել Արևելյան Լուիզիանայի Գարֆիլդ ավագ դպրոցում մաթեմատիկա դասավանդելով: Թեև դպրոցը երբեք չի գերազանցել ակադեմիական տաղանդը, աշխատասիրությունը և դասավանդելու սիրո շնորհիվ, Էսկալանտեն կարողացել է մեծապես բարելավել իր աշակերտների կատարողականը: 1980-ականների սկզբին Գարֆիլդի ավագ դպրոցի աշակերտները հանձնեցին պետական AP քննությունը, որը ուսուցչի ազգային մրցանակներ է բերել: Էսկալանտեի պատմությունը ցուցադրվել է «Դիմանալ և հասնել» ֆիլմում:

Եզրակացություն

«Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի ծրագիրը կնպաստի սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությանն ու ինքնազարգացմանը: Կօգնի սովորողներին ուսումնասիրել իրենց հետաքրքրությունները, պլանավորել կարիերայի հետ կապված դրական փորձառությունները և գործողությունների նախագծման մեթոդի օգնությամբ յուրաքանչյուր տարիքային փուլին համապատասխան կատարել գիտակցված և նպատակային որոշում:

Ծրագիրը հնարավորություն կտա արժեքների համակարգում կարևորել մասնագիտական պիտանելիության գաղափարախոսությունը, առողջ քննարկումները, ուսումնական հաստատությունների հնարավորությունների առավելությունները, ինչպես նաև միջանձնային փոխհարաբերություններում մասնագետների նկապմամբ դրական վերաբերմունք, հավասարությունը:

«Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի ծրագրի շրջանակում հնարավոր կլինի նպաստել սովորողների դիրքորոշումների ձևավորմանը, սահմանել կարիերայի դժվարին, բայց իրագործելի նպատակներ, պատասխանատություն կրել սեփական որոշումների կայացման գործում և շարունակել աշխատաշուկայի մարտահրավերներին համապատասխան հմտությունների զարգացումը:

Ծրագրի շրջանակում կբացահայտեն և կճանաչեն ոլորտային մասնագետների՝ ուսումնասիրելով անհրաժեշտ ռեսուրսները՝ կհամադրեն սեփական հնարավորությունների հետ և կդիտարկեն որպես մասնագիտական ներդրում, հաջողության գրավական:

Վերջնարդյունքում, մասնագիտության ընտրությունը և կարիերայի պլանավորման գործընթացի մարտահրավերը կիրագործի ողջ կյանքի ընթացքում, կկարողանա արագորեն, նպատակային, գիտակցված ընտրել նոր մարտահրավերներ և շարժվել ժամանակին և իրավիճակին համապատասխան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարության 04.02.2021թ. №136-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին»:

2. Ուսումնամեթոդական ձեռնարկ հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ծառայություններ իրականացնող մասնագետների համար: Եր., Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն, 2021թ. – 159էջ:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 18.12.2019թ. №1287-Ա/2 հրաման՝ «Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ուսումնամեթոդական ուղեցույցը հաստատելու և կիրառումը երաշխավորելու մասին»:

4. ՀՀ կառավարության 05.12.2019թ. №1753-Լ որոշում «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարությունը, դրա գործողությունների շրջանակը և ֆինանսական գնահատականը հաստատելու մասին»

5. Մասնագիտական կողմնորոշման նյութերի ժողովածու ուսուցիչների համար (8-12-րդ դասարաններ): -Եր., 2017:

6. Ուղեցույց հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման. ՀՀ ԱՍՀՆ ՄԿՄԿ: Եր.: 2016թ. – 84 էջ:

7. Մեթոդական ուղեցույց մեծահասակների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման: ՀՀ ԱՍՀՆ, ՄԿՄԿ: -Եր., 2016:

8. Գևորգյան Հ., «Մասնագիտական կողմնորոշման գործընթացի իրականացման տեխնոլոգիաներ»: Ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2016:

9. Կարիերայի ուղղորդման հիմնախնդիրներն ու զարգացման միտումները: Միջազգային գիտական կոնֆերանսի հոդվածների ժողովածու /ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: -Եր., «Զանգակ-97» հրատ., 2014. -208 էջ:

10. Гудкова Е.В., Основы профориентации и профессионального консультирования: Учебное пособие/ Под ред. Е.Л. Солдатовой. – Челябинск: Изд-во ЮУрГУ, 2004. – 125 с. (էջ 4-19)

11. Никитина Н.И., Глухова М.Ф., Методика и технология работы социального педагога. –М.: Гуманитар. изд. центр ВЛАДОС, 2007. -399с.

12. Организация профориентационной работы в школе: Сборник инструктивно-методических материалов. – Биробиджан: ОблИПКПР, 2011. – 28 с.